ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«18» փետրվարի 2026 թ No 29-Ա

# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՐԱՄ ԴՈՐՎԱՐԴԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 108.1-ին հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Հայկ Մկրտչյանի 2026 թվականի փետրվարի 6-ի թիվ 18532 ԿԳ-26 գրությամբ ներկայացված՝ «Թիվ 62303224 քրեական վարույթով մեղադրյալ Արամ Նիկողոսյանի պաշտոնավարումը կասեցնելու մասին» 04.02.2026թ. որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Առողջապահության նախարարության «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Արամ Դորվարդի Նիկողոսյանի պաշտոնավարումը 2026 թվականի փետրվար 6-ից համարել կասեցված՝ մինչև պաշտոնավարման կասեցման վերացումը, պահպանելով աշխատատեղը (պաշտոնը), չպահպանելով վարձատրությունը:
2. Արամ Դորվարդի Նիկողոսյանի պաշտոնավարման կասեցման ընթացքում Առողջապահության նախարարության «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՓԲԸ-ի տնօրենի բուժական գծով տեղակալ Գևորգ Ստեփանյանին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

17.02.2026

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157